Արձանագրություն N 2

Ազգային ժողովի 2024 թվականի կարիքների համար Ազգային ժողովի տարածքի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԽԾՁԲ-24/3 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան, Մ. Բաղրամյան 19

10.04.2024թ.
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Թորոսյան, Ն. Հարությունյան, Տ. Բաղալյան, Ա. Խուդինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Հովհաննիսյան

Նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված ՀՀ ԱԺ ԳՀԽԾՁԲ-24/3 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված:

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնվելիք ծառայությունների գինը (ՀՀ դրամ)
1	նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ	3500000

1 Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների Armeps /www.armeps.am/ համակարգի միջոցով 2024 թվականի ապրիլի 10-ին ժամը 15:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«Ղազարյան Շին» ՍՊԸ	ք. Երևան, Մամիկոնյանց 6/1, բն. 35	+37494491111	ghazaryanshin@yandex.ru
2	«ԷՅ ՋԻ ԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ	ք. Հրազդան, Շինարարների փող. 70	+37455995995	agtproject2019@mail.ru
3	«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ	Արարատի մ., գ. Ոստան, Երևանյան 13	+37496595010	architools@mail.ru

3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից Հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

4. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Մասնակիցներ	Առաջարկած գինը /ՀՀ դրամ/		
		Գնի առաջարկն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«Ղազարյան Շին» ՍՊԸ	2980000	-	2980000
2	«ԷՅ ՋԻ ԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ	3200000	-	3200000
3	«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ	3400000	-	3400000

6. Տվյալներ՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

11.04.2024թ. ժամը 12:00-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով համակարգի կողմից «Ղազարյան Շին» ՍՊ, «ԷՅ ՋԻ ԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊ և «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթերը, արձանագրեց, որ հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ղազարյան Շին» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝

7.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ «Ղազարյան Շին» ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

7.2 Հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

7.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

7.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Վ. Հարությունյան

անդամներ՝ _____ Վ. Թորոսյան

_____ Ն. Հարությունյան

_____ Տ. Բաղալյան

_____ Ա. Խուդինյան

քարտուղար՝ _____ Ռ. Հովհաննիսյան